«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«26» հունիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-22/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի 11.06.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բիդեք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 11.06.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2015թ. մայիսի 25-ի թիվ 13/15 որոշմամբ «Բիդեք» ՍՊԸ-ի 06.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարվել էր և դադարեցվել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. թիվ 1 արձանագրության 1-ին կետով «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Սակայն 2015թ. մայիսի 25-ին, ժամը 04:30-ին «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հերթական անգամ կայացրել է ապօրինի որոշում, մասնավորապես, «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 25-ի նիստի թիվ 2 արթանագրության մեջ նշված է, որ հանձնաժողովը տեղեկացնում է, որ «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը, որի բացման նիստը տեղի է ունեցել 27.04.2015թ.-ին, հանձնաժողովը որոշել է համարել չեղյալ, քանի որ ծավալաթերթ-նախահաշվում առկա են թերություններ, որոնք ի հայտ են եկել ստացված բողոքի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվի մանրամասն ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև անհետաձգելի շինվերանորոգման պահանջներ են առաջացել, որոնք նույնպես պետք է ներառել ծավալաթերթ-նախահաշվի մեջ: Նշված շտկումների ավարտից հետո կկազմակերպվի գնման նոր ընթացակարգ:

Ընկերությունը 03.06.2015թ. բողոք է ներկայացրել «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից հայտարարված «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 25-ի որոշումը դադարեցնելու պահանջի մասին:

Սակայն 2015թ. մայիսի 25-ի որոշումը կայացվելուց հետո, հենց նույն օրը՝ մայիսի 25-ին «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար՝ «շինարարական աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակագրի հրավեր:

Ընկերությունն ակնհայտ է համարում, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի՝ 2015թ. մայիսի 25-ի թիվ 13/15 որոշմամբ «Բիդեք» ՍՊԸ-ի՝ 06.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարվելուց և «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. թիվ 1 արձանագրության 1-ին կետով «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցվելուց հետո, հանձնաժողովի կողմից «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը ապօրինաբար նախ չեղյալ է համարվել, այնուհետև հենց նույն օրը ըստ էության նույն

աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավեր է հաստատվել մեկ պատճառով, այն է՝ որպեսզի Ընկերությունը հաղթող չճանաչվի:

«Բիդեք» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի, 20-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գորշընթացի կազմակերպման» կարգի 25-րդ կետի, 37-րդ կետի 1-ին ենթակետի, 77-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև իրավական այլ նորմերի պահանջների կոպիտ խախտմամբ: Այսպիսով, ապօրինի են /ապօրինի կհամարվեն/ նաև «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հետ կապված ցանկացած այլ որոշում:

Ընկերության կարծիքով «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ համարելուց հետո առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ նախաձեռնելը ի սկզբանե ապօրինի է /ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերություն/:

Բացի այդ, «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարիգի շրջնականերում ցանկացած պայմանագիր առոչինչ կհամարվի, քանի որ «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ է համարվել ապօրինաբար:

«Բիդեք» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարաությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշումը, դրանից հետո նույն ընթացկարգի շրջանակներում կայացված բոլոր որոշումները և չեղյալ հայտարարել կնքված պայմանագիրը, ինչպես նաև «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Բիդեք» ՍՊԸ-ի 11.06.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.06.2015թ. գրությամբ հայտնել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը օրենքի ոչ մի կետով հիմնավորված չէ, քանի որ 2015թ. մայիսի 25-ի թիվ 1 արձանագրությամբ կայացրած որոշումը ներկայումս գտնվում է բողոքարկման փուլում և դեռևս հայտնի չէ, թե գնահատող հանձնաժողովը ինչ որոշում կկայացնի, քանի որ նիստ դեռևս վերջնական ամփոփված չէ:

Անդրադառնալով Ընթացակարգի վերաբերյալ Ընկերության կողմից բողոքի հիմք ծառայեցրած օրենքի կետերին, որտեղ նշվել է, որ ընթացակարգի շրջանակներում խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությունը, Պատվիրատուն մատնանշել է Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությունը:

Պատվիրատուն նշել է, որ ինքն առաջնորդվել է օրենքի վերոնշյալ կետով, քանի որ ներկայացված բողոքի քննության արդյունքում իր մոտ ստեղծվել էր արտակարգ իրավիճակ և մի շարք հրատապ շինարարություններ, որոնք բխում էին թե ստեղծված անբարենպաստ վթարային իրավիճակներից, թե ուսումնական պրոցեսի բնականոն կազմակերպման անհրաժեշտությունից, իսկ Կարգի 74-րդ կետը Պատվիրատուին թույլ է տալիս կազմակերպել գնումը հնարավորինս սեղմ ժամկետներում:

Այսպիսով, Պատվիրատուն գտնում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի բողոքը չի կարող բավարարվել, քանի որ բողոքարկող կողմը իրար է կապել երկու տարբեր գործընթացներ՝ դեռևս չունենալով առաջին բողոքի որոշումը:

Պատվիրատուն միևնույն ժամանակ հայտնել է, որ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը գործել է օրենքի դրույթներին համապատասխան և սահմանված կարգով կազմակերպել է գնման ընթացակարգ:

Պատվիրատուն նշել է նաև, որ «Բիդեք» ՍՊԸ-ն միտումնավոր ցանկանում է խանգարել «Երևանի պետական համլսարան» Հիմնադրամի համար հրատապ դարձած շինարարության իրականացման բնականոն ընթացքին:

3. ԳԲԽ-22/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-22/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 18-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 27.04.2015թ. ժամը 09:30-ին:

3. Պատվիրատուն 21.05.2015թ. թիվ 01/458 գրությամբ դիմել է «Արխիվ Էվրիկա» ՍՊԸ-ին, խնդրելով՝ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամում առաջացած հրատապ շինարարական աշխատանքների համար սեղմ ժամկետներում կատարել նոր նախահաշվային փաստաթղթերի մշակում:

4. Պատվիրատուն 25.05.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրությամբ հայտարարել է «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

5. «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. ժամը 04:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի որոշմամբ «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ է համարվել գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշվում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև առաջացած անհետաձգելի շինվերանորոգման պահանջները ծավալաթերթ-նախահաշ-վում ներառելու համար:

6. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի 22.06.2015թ. թիվ 21/15 որոշմամբ բավարարվել է «Բիդեք» ՍՊԸ-ի 03.06.2015թ. ներկայացրած բողոքը և դադարեցվել է «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

25.05.2015թ. թիվ 2 արձանագրության 1-ին կետով «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ համարելու մասին որոշումը:

7. Պատվիրատուի կողմից 05.05.2015թ. հաստատված գնումների պլանի փոփոխությամբ ինժեներական և շինարարական աշխատանքների գնման ձև է նախատեսվել բաց ընթացակարգը՝ 400.000.000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ նախահաշվային գնով, սակայն www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 24.06.2015թ.:

4. ԳԲԽ-22/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի 11.06.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի 17.06.2015թ. գրությունը, «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրությունը, Պատվիրատուի կողմից 05.05.2015թ. հաստատված, սակայն 24.06.2015թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների պլանի փոփոխությունը և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 22.06.2015թ. թիվ 21/15 որոշումը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա: Առանց նախագծային փաստաթղթերի առկայության շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվել չեն կարող, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ գնումները կարող են կատարվել

օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա՝ չկանխատեսված հանգամանքների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում, բացառությամբ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ տվյալ գնումը կատարելու համար նոր ֆինանսական միջոցներ հատկացվելու կամ պետության կարիքների համար գնումների դեպքերի: Նույն ենթակետի համաձայն հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից հաշված մինչև տասնհինգ օրացուցային օրվա ընթացքում, պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Պատվիրատուն 21.05.2015թ. թիվ 01/458 գրությամբ դիմել է «Արխիվ Էվրիկա» ՍՊԸ-ին, խնդրելով՝ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամում առաջացած հրատապ շինարարական աշխատանքների համար սեղմ ժամկետներում կատարել նոր նախահաշվային փաստաթղթերի մշակում:

Պատվիրատուն 25.05.2015թ. ժամը 04:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ չկայացած է հայտարարել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված բաց ընթացակարգը՝ ծավալաթերթ-նախահաշվում առկա թերությունների շտկման և անհապաղ առաջացած շինարարական աշխատանքները դրանում ներառելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն 25.05.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 1 արձանագրությամբ հայտարարել է «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 22.06.2015թ. թիվ 21/15 որոշմամբ դադարեցրել է «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. թիվ 2 արձանագրության 1-ին կետով «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի հրավեր-ծանուցումը չեղյալ համարելու մասին որոշումը, քանի որ Պատվիրատուն «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով ընթացակարգի

հրավեր-ծանուցումը չեղյալ համարելու մասին կայացված որոշմամբ խախտել է Օրենքի 35-րդ հոդվածի և Կարգի 74-րդ կետի պահանջները:

Պատվիրատուն Կենտրոնին է ներակայացրել «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով բանակցային ընթացակարգի ծավալաթերթ-նախահաշիվը, սակայն չի ներկայացրել «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով բաց ընթացակարգի ծավալաթերթ-նախահաշիվը, ինչպես նաև չի ներակայցրել որևէ ապացույց որով կհաստատվեր վերոհիշյալ երկու ընթացակարգերի ծավալաթերթ-նախահաշվիներում առկա փոփոխությունները:

Բացի այդ, Պատվիրատուի կողմից 05.05.2015թ. հաստատված, սակայն 24.06.2015թ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների պլանի փոփոխությամբ՝ ինժեներական և շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման ձև է նախատեսվել բաց ընթացակարգը՝ 400.000.000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ նախահաշվային գնով, մինչդեռ, Պատվիրատուն բաց ընթացակարգ հայտարարելու փոխարեն, 25.05.2015թ. թիվ 1 արձանագրությամբ հայտարարել է «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 22.06.2015թ. թիվ 21/15 որոշմամբ դադարեցրել է «ԵՊՀ-ԲԸԱՇՁԲ-15/03» ծածկագրով «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը և շինարարական աշխատանքների ձեռքբերման չավարտված ընթացակարգի առկայության պայմաններում կազմակերպվել է ըստ էության նույնական աշխատանքների ձեռքբերման «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, գտնում ենք, որ Պատվիրատուն խախտել է Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը և Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությունը՝ հետևաբար Պատվիրատուի կողմից «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ նախաձեռնելու հիմքեր առկա չեն եղել:

Ինչ վերաբերում է «Բիդեք» ՍՊԸ-ի բողոքով նշված Պատվիրատուի և «Հուտիտ» ՍՊԸ-ի միջև 01.06.2015թ. կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին

պահանջին, ապա հայտնում ենք, որ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը, եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց նույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու, իսկ «բ» ենթակետի համաձայն՝ նույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը, եթե առկա են Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված խախտումները, ինչը տվյալ պարագայում բացակայում է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Բիդեք» ՍՊԸ-ի 11.06.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2015թ. թիվ 1 արձանագրությամբ «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը և «ԵՊՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/85» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-22/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան